ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «Բիզնեսի կազմակերպում» ամբիոնի պրոֆեսոր, նախկին ռեկտոր Լևոն Վարդանյանի ծննդյան հոբելյանին նվիրված մեծարման հանդիսավոր արարողությանը

29 նոյեմբերի, 2011թ.

Մեծարգո՛ հոբելյար,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ հայ տնտեսագիտության անխոնջ նվիրյալիդ՝ ծննդյան 85-ամյակի առթիվ և հղում մեր բարեմաղթանքները՝ ցանկանալով Ձեզ արևշատություն ու քաջառողջություն:

Հոբելյանական տարիները սոսկ միայն տարիների գումար չեն, այլ վաստակ, արարում, երջանկություն, անքուն գիշերներ, հոգս ու, անտարակույս, հաղթանակ:

Դուք, սիրելի՛ պարոն Վարդանյան, հարգարժա՛ն հոբելյար, տարիների բարձունքից, երբ հետադարձ հայացք ձգեք Ձեր անցած ճանապարհին՝ դուք երկմտելու, զղջալու պահեր չեք ունենա, քանզի այն անցել եք պատվով, նվիրումով ու սիրով:

Շուրջ երեք տասնամյակ է, ինչ դուք մեր բուհում եք, Ձեր անսպառ գիտելիքները փոխանցում եք սերունդներին, ճանապարհում նրանց դեպի մեծ կյանք. Ձեր ռեկտորության շրջանում՝ 1984-88 թվականներին բուհը կայացման ու ինքնահաստատման, ուսումնագիտական, բուհ-արտադրություն համակարգի ձևավորման շրջան էր ապրում, հաջորդ տարիները համընկնում էին մեր ժողովրդի զարթոնքի, ազգային ազատագրական շարժման, երկրաշարժի, անկախ պետականության կազմավորման ժամանակաշրջանին, որն իր հետ բերում էր նոր խնդիրներ, ինչպես մեր հանրապետության, այնպես էլ մեր հարազատ կրթօջախի համար: Ձեր անմիջական ղեկավարմամբ այդ դժվար, սակայն մեր ժողովրդի համար ճակատագրական պահին, դուք Ձեր դիրքում էիք, արարում էիք, շահագործման հանձնում ժամանակակից լաբորատորիաներ, շինարարական համալիր, Դիլիջանի մարզաառողջարարական ճամբարը՝ կրկնապատկելով ուսանողների թիվը: Այս ամենին զուգահեռ նաև զբաղվում էիք գիտահետազոտական, դասախոսական աշխատանքով. առհավատչյան Ձեր ուսումնասիրություններն են, գիտական ծանրակշիռ վաստակը. Դուք

հիրավի նոր ընթացք ու ուղղություն տվեցիք թե՛ հայ տնտեսագիտական մտքին, թե՛ տնտեսագիտական համալսարանին:

Սիրելի՛ Լևոն Եղիշի, Դուք մեր բուհի այն եզակի երջանիկներից եք, որ այսօր էլ՝ տասնամյակներ անց, բաց ճակատով կարող եք նայել Ձեր սաների աչքերին, աշխատակիցներին, երբևէ վատ չզգալով Ձեզ: Դուք տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր եք, Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, վաստակաշատ մտավորական, ումից միայն մենք սովորում ենք, դասեր առնում: Ձեզ երջանկություն և առողջություն ենք մաղթում և խաղա՛ղ-խաղա՛ղ օրեր:

Ծնունդդ շնորհավոր, պարոն Վարդանյան: